

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Սաքսոնիայի պրինց Մաքս մի յօգուած էր հրատարակել եկեղեցիների միութեան համար: Պապը չբաւականացաւ նրանով՝ որ պրինց կրօնաւորը հրաժարուեց իւր արտայայտած հայեացքից, — դեկտմ. 26-ին ն. տ. մի թուղթ էլ գրեց Արևելքի հռովմէական եկեղեցու վարչութիւնների ներկայացուցիչներին: Իւր թղթում պապը առանց հեղինակի անունը տալու՝ իւր վիշտն է յայտնում Մաքսի յօգուածի առիթով և ասում է. «լի է այն ոչ միայն աստուածաբանական այլ և պատմական այնքան շատ և այնքան լսւթ մոլորութիւններով, որ անհնարին է այդ բոլորը ամփոփել սակաւաթիւ էջերում», պապը այնուհետեւ թուելով «մոլորութիւնները» այդ կարգում՝ հաշւում է և Մաքսի այն բոլոր վարկումները, որոնցով պրինցը արգարացի է գտնում՝ արևելեան եկեղեցու հայեացքը և խոստովանում է արեւմտեանի սխալմունքները: Նա կաթոլիկ եկեղեցու վարդապետութիւնը թէ Ս. Հոգին ըղիսել է Որդոց՝ գտնում է հակառակ աւետարանին և եկեղեցու սուրբ հայրերի վկայութեանը, նոր է, ասում է, քաւարանի և Մարիամի անարատ յղութեան վարդապետութիւնը, այն յայտնի չէր առաջին դարերի քրիստոնեաներին, թէ, Ս. Պօղոսը առաքելութեան մէջ ամեն բանով հաւասար եղբայր էր Ս. Պետրոսին, թէ կաթոլիկ եկեղեցին սկզբում՝ միապետական չէր և հռովմէական առաջնութիւնը իւր համար ամուր հիմք չունի ևն, ևն:

Այս բոլոր մտքերը պապը համարում է «յանդուգն խեղաթիւրումն կաթոլիկական ճշմարտութեան», խեղաթիւրումն է անուանում պապը և այն, ինչ որ Մաքսը ասում է եկեղեցիների բաժանման, խաչակրաց արշաւանքների, Ֆլորենտինեան ժողովի, արեւմտեան տիեզերական ժողովների և պապական ձգտումների մասին՝ արևելեան եկեղեցու վերայ գերիշխանութիւն տնկենալու վերաբերութեամբ: Պապը դատապարտում է Մաքսի այս վարկումներն ու վարդապետութիւնը, որպէս «սուտ, անմիտ, կաթոլիկական հօտին օտար» մտքեր:

Արեւելի կաթոլիկ առաջնորդներին պապը հրաւիրում է զգուշացնել իրանց խնամքին յանձնուած ժողովուրդներին այս ճարակող վէրքից, համոզել, որ հաստատ մնան իրանց կրօնին ու համոզմունքին, թէ պապը ոչ մի բան այնպէս չառ չէ ցանկանում, որպէս արեւելեանների միութիւնը... Պապը պատուիրում է կաթոլիկ առաջնորդներին, որ իւր այս թուղթը տեղական լեզուներով թարգմանեն ու հրատարակեն։ Իբրեւ եղբակացութիւն, յայտնում է պապը, որ յօդուածագիրը հրաժարուել է իւր յօդուածի մտքերից, ընդունել է պապական թղթի վարդապետութիւնը, և հրաժարուել է ուսուցանել այն ամենը, ինչ որ մերժում է առաքելական աթոռը։

Այս առիթով Իեր. Բեց. ը ԴՎ. ԴՅԱՌՈՅԻ-ի արտասահմանեան հետեւեալ թղթակցութիւնն է տպում.

Պիոս Ժ. պապի նոր տարուայ կոնդակի իսկական միտքը եկեղեցիների միութեան խնդրի մասին

«Սաքսոնիայի Էլշան Վաքսմիլիանի, եկեղեցիների միութեան մասին այնքան ազմուէ յարուցանող յօդուածը հրատարակուեց թէ ոչ, ինչպէս յայտնի է, «Observatore Romano» հանդէսում իսկոյն երեւաց Պիոս Ժ-ի կոնդակը, ուղղուած Աղէքսանդրիայի, Անտիոքի, Բաբելոնի, Վիլիկիայի արեւելեան պատրիարքներին և արեւելեան բոլոր եպիսկոպոսներին, նոյն միութեան խնդրի առիթով։ Այդ կարեւոր կոնդակը, որ պէտք է թագմանուէր բոլոր արեւելեան լեզուներով, է ժամանակի նշանը և յիշուի, մեծ նշանակութիւն ունի։ Խուս հոգեւոր և աշխարհիկ մամուլում բաւական քննադատուեց Սաքսոնիայի Էլշանի յօդուածի միջնադէպքը։ Սակայն մեզ դէպք չէ եղել տեսնել պապինոր տարուայ կոնդակի իսկական նպատակի բացատրութիւնը, կոնդակի, որը ըստ երեւութիւն, անկեղծօրէն և քրիստոնէական մեծահոգութեամբ կոչ է անում Արեւելին, միանալու կաթոլիկ արեւմուտքի հետ։

Ի հարկէ ուղղափառ Արեւելքը իրան արժանի տեղը կը յատկացնի Հռովմայ քահանայապետի այս կոչին, այսինքն ըստ արժանեաց կը գնահատի։ Սակայն մեզ թւում է, որ անօգուտ չէր լինի եթէ փոքր իշատէ պարզէնը մեզ այս կոնդակի իսկական միտքը այժմեան ժամանակում։

«Պիոս Ժ-ի նոր տարուայ կոնդակը յիշուի ունի կարեւոր

Նշանակութիւն, բայց ոչ «Արեւելքի և Արեւմուտքի միութեան» վերաբերութեամբ, այլ «բացառապէս» մի միայն իրան—կաթ ու է կ ե կ ե ղ ե ց ու վ ե ր ա բ ե ր ու թ ե ա մ բ. ե կ ե ղ ե ց ի ն ե ռ ի ի ս կ ա կ ա ն միութեան համար, կարծեմ, անհշատեշտ է «հրաշքը»:

Քննենք ուրեմն նոր տարու առիթով պապական կոնդակի միտքը ուրիշ տեսակէտով:

Հռովմէական եկեղեցին—ընդհանրապէս արեւմտեան կաթոլիկութիւնը—բոլորովին անբարեյաջող շրջան է անցկացնում: Չխօսելով արդէն պապի իսկական հեղինակութեան զգալի կերպով նուաղելուն յաշտ նոյն ինքն կաթոլիկների, բացառութեամբ միայն մի քանի հին աղնուական կենտրոնների, որոնք կարելի է առել, արդէն այժմեան ժամանակում կորցրել են իրանց նշանակութիւնը, կամ տարօրինակ ամերիկացիների, որոնք երբեմն միլիոնաւոր նուիրաբերութիւններ են անում պապական աթոռին, ոչ թէ այսպէս ասած կրօնական համոզմունքից դրդուած, պապի կրօնական վարչական իշխանութիւնը կաթոլիկ աշխարհի վերաբերութեամբ բաւական երեւուն է դարձել: Պապի վեհ պատկերի մէջ խրամատ է բացուել: Պապական դահի տակը կաթոլիկութեան և ընդհանրապէս կրօնի թշնամիները վիհ են փորում: Կրօնական Հռովմին առաջին զգալի հարուածը հասցրեց մօտ ժամանակներում Ֆրանսիան: Այս հարուածը այնքան ուժեղ էր, որ պապը իւր նկուն լինելը, ուղղելու համար մտածում է անձամբ երեւալ Փարիզում: Եթէ այս լուրը ճշմարիտ էլ չը լինի, յամենայն դէպս եկեղեցու ժամանակակից դրութիւնը Ֆրանսիայում հարկադրում է հոգեւոր Հռովմին լըջօրէն հոգալ:

Երկրորդ լուրջ հարուածը կաթոլիկութեանը հասցրել է ժամանակակից գիտական ուղղութիւնը, որ նոյն իսկ կաթոլիկութեան մէջ, համարձակօրէն բաց է անում հասարակութեան առաջ կաթոլիկութեան թոյլ կողմերը և դրա հետեւանքով կրօնական պաղութիւնը դէպի Հռովմ զօրանում է: Այս ուղղութիւնը յայտնապէս արտայայտուած է, Հռովմից դատապարտուած յայտնի մօղերնիզմով: Հռովմին հարուածը այս կողմից շատ զօրեղ է և վտանգաւոր: Նրանք, որոնք ծանօթ չեն արեւմտեան կաթոլիկութեան քրիստոնեական հետ, դուրսէ մեղադրեն մեզ, թէ մենք նուազատաքնում ենք պապական կոնդակի նշանակութիւնը և աշառու դատաւոր ենք, բայց հազիւ թէ սխալուենք, եթէ մի քիչ խիստ արտայայտենք մեր միտքը, թէ Պիոս Ժ-ի այս կոնդակը ինչպէս և նրա նախորդի (Լեոն ԺԳ-ի 1894 թ.) նման յայտարարութիւնները ոչ մի լուրջ նշանակութիւն չունին եկեղեցիների միութեան խնդրի վերա-

քերութեամբ, և այդ խնդիրը մի քայլ անդամ առաջ չեն մղի: Թէ այս այսպէս է, կասկած չըկայ, ինկատի ունելով կոնգակի հիմնական դրութիւնը, որ Արեւելքին հրաւիրում է միանալու կաթոլիկ արեւմուտքի հետ, միայն այն պայմանով՝ որ ուղղափառ Արեւելքը անխուսափելիօրէն պահպանէր և ամբողջովին ընդունէր կաթոլիկ վարդապետութեան բոլոր դասնական դրութիւնները: Արանով, անկասկած, ամեն բան ասուած է, և որքան էլ այն սիրառատ երեւէ՝ անուամենայնիւ պատրուակը չի կարող ծածկել Հռովմայ եկեղեցու իսկական հայեացքը այս խնդրի մասին: Պարզ է, որ այս տեսակէտով, եկեղեցիները միութեան խնդիրը հենց այս կոնգակի գոյութեամբ, գտնւում է այն դրութեան մէջ, որի մէջ գտնւում էր նրա ծագման օրը և ժամին, և հետեւաբար, կոնգակի նշանակութիւնը այս մասին ոչնչի է հաւասար: Ակամայ յիշում ենք մի հին կաթոլիկի անկեղծ խօսքերը, որ իւր բոլոր կեանքը նուիրել էր եկեղեցիները միութեան գաղափարին (խօսքս Բերնի ուսուցչապետ Միշօ-ի մասին է) «եկեղեցիների միութիւնը կը կատարուի այն ժամանակ միայն, երբ Հռովմը կը հրաժարուի կամ կը հարկադրուի հրաժարուել իւր դաւանական մոլորութիւններէն»: Ըստ այսմ դրա մասնական երեւոյթները արդէն սկսում են նկատելի դառնալ գրականութեան մէջ Սաքսոնիայի իշխան Մաքսիմիլեանի յօդուածի պէս յօդուածներում՝ ընդհանուր վարչական կեանքում, երբ կաթոլիկ պաշտօնեաները կտրականապէս մերժում են Պապի հրամանները: Յայտնի է, որ մօտ ժամանակներս Հռովմէական եկեղեցու 50 պաշտօնեաներ, որոնք պատկանում էին Բաւարիայի 6 դաւառներին, հրաժարուեցին մոզերնիզմի դատապարտութիւնը ստորագրել:

Հռովմը շատ լաւ է հասկանում սպառնացող վտանգը և շտապում է վճռական միջոցներ ձեռք առնել: Այդ միջոցներից մի քանիսը մենք մօտ ժամանակներս մատնանշեցինք ՊԵՏ. ԵՅԵՏ.-ում, դրանք են Եղուիաներին կոչելը դէպի գործունէութիւն, եկեղեցական խիստ կարգապահութիւն և այլն (ՊԵՏ. ԵՅԵՏ. № 50, 1910 թ. նորագոյն հոլերը կաթոլիկ եկեղեցում):

Այս միջոցների որպէս շարունակութիւն, կարծում ենք, երևաց Պապի նոր տարուայ կոնգակը, որ դրուած է մօտաւորապէս ոչնչացնելու Հռովմի համար վնասակար իշխանի հայեացքների վնասակար նշանակութիւնը և այնուհետև ըստ երեւոյթի մեծահոգութեամբ հրաւիրելով ուղղափառ Արեւելքը ի միութիւն, մտածելով դէպի ինքը տրամադրել վերջինիս, և, այսպէս ասած, վախեցնել թշնամիներին այն

կաթ ուլիկ եկեղեցու, որը որպէս թէ շատ կուժեղանայ, եթէ միութիւնը իրականանայ: Այդ ձեւը, ուրեմն, դառնում է կողմնակի միջոց կաթ ուլիկութեան օգտին:

Կարծուում է, որ այդ է պապական նոր տարուայ կոնդակի միտքը, և հենց այդ տեսակէտից էլ այն ունի կարեւոր նշանակութիւն:

Պապը պէտք է հրաժարուի եկեղեցում՝ միապետելու ձգտումից, որ սիրոյ մասին անվիճելի կերպով հնար լինի դատել: Բայց միահամուռ գործակցութիւնը դժուարին է, քանի որ երկու եկեղեցիների շահերը տարբեր են և պապը միութիւն է առաջարկում, որ միապետ դառնայ ինչպէս Արեւմտեան նոյնպէս և Արեւելեան եկեղեցում:

Ռուսաստանի Մարիավիհների կառավարչի նոր օգնականներ.

«Россія»-(փետր. 6) գրում է.

«Թագաւոր Կայսրը ներքին Դոմեքի նախարարի ամենահպատակ ղեկաւորման համեմատ բարեհաճեց այս տարուայ յունվարի 27-ին բարձրագոյնս նշանակել հին-կաթ ուլիկ Պրոկոնսեւսի և Գոլեմբիովսկի եպիսկոպոսներին օգնականներ՝ Ռուսաստանի բոլոր մարիավիհներին կառավարչի:

Այս նշանակումը հաջցելու առիթն էր այն, որ մարիավիտների թիւը այժմ 200 հազարից աւելի է. և որ, ինկատի ունենով մարիավիտականութեան տարածումն, Կովալսկի եպիսկոպոսը որպէս կառավարիչ ամբողջ հասարակութեան, որ սկիզբ է լեհական թագաւորութեան և կայսերութեան արեւմտեան երկրների նահանգներում, դժուարանում է անմիջապէս հսկողութիւն ունենալ մարիավիտների հասարակութեան կրօնական կեանքի կանոնաւոր ընթացքի վերայ:

Յ. Ա. Ե.